ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔ

Արմավիրի մարզ
գ. Տարոնիկ, 1148
հեռ. 093.97.06.18

N -17

26. 01. 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Կից Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի 2018 թվականի հունվար ամսվա ընթացքում համայնքի ղեկավարի կողմից ընդունած որոշումները:

Առդիր՝ 4 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԽԼՂԱԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

23. 01. 2018թ. Թիվ-3

ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Տարոնիկ համայնքի բնակիչ՝ Ստեփանյան Նվեր Եղիշի (ծն.1951թ.), դիմել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի Անդրանիկի փողոց տուն 26 հասցեում գտնվող իրեն պատկանող (ըստ օրենքի ժառանգության վկայագիր 22.01 .2018թ սեղանամատյան 521) 0.14 հա. օրինական, կից օգտագործվող 0, 0198 հա. հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք- շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով: Հաշվի առնելով, որ բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 1970 թվականը, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1;2;3; ենթակետերով սահմանված պահանջներին և հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի Անդրանիկի փողոց տուն 26 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի՝ Ստեփանյան Նվեր Եղիշի (ծն.05.02.1951թ.), գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.14 հա. օրինական, հողամասին կից 0.0198 հա օգտագործվող հողամասի և 0.1598 հա հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների (բնակելի տուն 32[illegible] քմ.,կառուցված 1970թ.) նկատմամբ:

1.Բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական

բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը ընդգրկված չի Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք- շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:
3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության ԿԱԳ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի՝ Ստեփանյան Նվեր Եղիշի ծն.1951թ.), սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք- շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
4.Բնակելի տանը տրամադրել Անդրանիկի փողոց տուն 26 հասցե:
5.Չեղյալ համարել համայնքի ղեկավարի 25.12. 2017 թվականի թիվ 82 որոշումը:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԽԼՂԱԹՅԱՆ

2018 թվական հունվարի 23

Տարոնիկ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

23. հունվարի 2018թ.

ԹԻՎ-4

ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387 –Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի ավագանու 2006 թվականի հունիսի 30-ի թիվ 5 նիստի 2 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի բնակիչ՝ Նվեր Եղիշի Ստեփանյանի հողամասը 0.15 հա կոդ՝ 035-009 հասցեավորել Անդրանիկի փողոց տուն 26 հասցեում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԽԼՂԱԹՅԱՆ

2018թվականի հունվարի 23

Տարոնիկ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թիվ-5

23. հունվարի 2018թ.

ԿԱՐԼԵՆ ՍԱՐԳՍԻ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 35-րդ, 36-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի բնակիչ՝ Զոզան Զոհրաբի Պետրոսյանի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Համայնքի անչափահաս բնակիչ՝ Կարլեն Սարգսի Զաքարյանը ծնված՝ 14.04.2003թ. նկատմամբ սահմանել հոգաբարձություն՝ հոգաբարձու նշանակել նրա հարազատ տատուն՝ Զոզան Զոհրաբի Պետրոսյանին:
2. Հսկողություն սահմանել Կարլեն Սարգսի Զաքարյանի նկատմամբ նշանակված հոգաբարձու Զոզան Զոհրաբի Պետրոսյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԽԼՂԱԹՅԱՆ

2018 թվական հունվարի 23
Տարոնիկ համայնք